ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 21.05.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2021/106

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի

Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամ

Մասնակից՝ «Թրեյդ Արթ» ՍՊԸ

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝

«ԳՀԱՊՁԲ-2021/3-3-ԵՊԲՀ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, տնտեսական, գրենական, գրասենյակային, կենցաղային ապրանքների և անխափան սնուցման սարքի մարտկոցի ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ), ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 21.04.2021թ.-ի թիվ 26/26-1/6055-2021 գրությամբ «Թրեյդ Արթ» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>Գործի նախապատմությունը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի 15.04.2021թ.-ի թիվ 09/547 գրության հիման վրա, 21.04.2021թ.-ին «Թրեյդ Արթ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքերը:

Բողոքներ քննող անձի գործը մակագրվել է 21.04.2021թ.-ին:

22.04.2021թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ՍՑ-ԼՕ-2021/106 համարի ծածկագիրը:

30.04.2021թ.-ին և 21.05.2021թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 30.04.2021թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 21.05.2021թ.-ին:

2. **<u>«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.</u>**

«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի 15.04.2021թ.-ի թիվ 09/547 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Հայտնում ենք Ձեզ այն մասին, որ 2021 թվականի մարտի 25-ին «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամը էլեկտրոնային ձևով գնումների իրականացումն ապահովող համակարգի՝ www.armeps.am կայքի միջոցով տնտեսական, գրենական, գրասենյակային, կենցաղային ապրանքների և անխափան սնուցման սարքի մարտկոցի ձեռքբերման նպատակով հայտարարել է «ԳՀԱՊՁԲ-2021/3-3-ԵՊԲՀ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ: Գնման ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել նաև «ԹՐԵՅԴ ԱՐԹ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը:

Գնահատող հանձնաժողովը 2021 թվականի ապրիլի 09-ի թիվ 2 որոշմամբ կասեցրել է նիստը, և ի թիվս այլ մասնակիցների «ԹՐԵՅԴ ԱՐԹ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը էլեկտրոնային եղանակով տեղեկացրել է մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել հայտում առկա անհամապատասխանությունները:

«ԹՐԵՅԴ ԱՐԹ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը սահմանված ժամկետում ներկայացրել է առկա անհամապատասխանությունների շտկման վերաբերյալ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը, սակայն շտկված փաստաթղթով առաջարկված ապրանքի տեխնիկական բնութագրերը չեն համապատասխանել հրավերով սահմանված ապրանքի տեխնիկական բնութագրերին:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 42-րդ կետի դրույթներով՝ հանձնաժողովը որոշել է «ԹՐԵՅԴ ԱՐԹ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից ներկայացրած հայտը գնահատել անբավարար և մերժել:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Ձեզ ենք տրամադրում «ԳՀԱՊՁԲ-2021/3-3-ԵՊԲՀ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին վերաբերվող անհրաժեշտ փաստաթղթերը՝ «ԹՐԵՅԴ ԱՐԹ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տվյալները գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացվել է «ԳՀԱՊՁԲ-2021/3-3-ԵՊԲՀ» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի շրջանակներում «Թրեյդ Արթ» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

3. <u>«Թրեյդ Արթ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 22.04.2021թ.-ի գրությամբ դիմել է «Թրեյդ Արթ» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 21.04.2021թ.-ի թիվ 26/26-1/6055-2021 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը, ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով հրավիրված նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, չի ներկայացել հրավիրված նիստերին՝ չներկայացնելով նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ գրավոր դիրքորոշում:

4. <u>ՍՑ-LO-2021/106 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>.

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կողմից (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից տնտեսական, գրենական, գրասենյակային, կենցաղային ապրանքների և անխափան սնուցման սարքի մարտկոցի ձեռքբերման նպատակով 25.03.2021թ.-ին հայտարարվել է «ԳՀԱՊՁԲ-2021/3-3-ԵՊԲՀ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգի հրավերի թիվ 1 հավելվածով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ 28-րդ չափաբաժնով նախատեսված փոշեկուլ ապրանքի համար սահմանվել է հետևյալ տեխնիկական բնութագիրը՝ *«Փոշեկուլ ձեռքի, մարտկոցային: Չոր մաքրում: Հզորությունը՝ առնվազն 120Վտ: Ներքաշման հզորությունը՝ առնվազն 22Վտ: Սնուցումը՝ 12վ: Փոշեհավաքիչ տարայի ծավալը՝ ոչ պակաս քան 0,5լ: Մարտկոցները NiMh տիպի: Աշխատանքը մարտկոցով առնվազն 10ր: Վրադիր մասեր՝ անկյունային հատվածների համար նախատեսված մաս, խոզանակ, մեծ խոզանակ, երկար խողովակ, սնուցման մալուխ, լիցքավորող սարք: Քաշը՝ ոչ ավել քան 1,5 կգ: Երաշխիքը՝ առնվազն 2 տարի:»:*

iii. Ընթացակարգին մասնակցելու նպատակով 28-րդ չափաբաժնի մասով հայտ է ներկայացրել նաև «Թրեյդ Արթ» ՍՊԸ-ն:

iv. Մասնակիցը մասնակցության հայտի թիվ 1 հավելվածով՝ գնման ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ԳՀԱՊՁԲ-2021/3-3-ԵՊԲՀ» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և հրավերի պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտ:

v. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 09.04.2021թ.-ին կայացված նիստի թիվ 2 արձանագրության 3.13-րդ կետի համաձայն՝ «Թրեյդ Արթ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա են պահանջվող (նախատեսված) փաստաթղթերը և կազմված են հրավերով սահմանված պահանջներին համապատասխան, բացառությամբ՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում (Հավելված 1.1) առկա են մի շարք անհամապատասխանություններ, որոնց մանրամասն նկարագրությունը ներառված է շտկման մասին ծանուցման տեքստում:

vi. Նույն արձանագրության 6.1-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետով, որոշել է մեկ /1/ աշխատանքային օրով կասեցնել հայտերի գնահատման նիստը և ծանուցել «Թրեյդ Արթ» ՍՊԸ-ին առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

vii. Հանձնաժողովի քարտուղարի կողմից 09.04.2021թ.-ին անհամապատասխանությունների շտկման վերաբերյալ ծանուցում է ուղարկվել Մասնակցի tradearttender@gmail.com էլ. փոստի հասցեին:

viii. Վերոնշյալ ծանուցմամբ Պատվիրատուն հայտնել է հետևյալը՝ *«Հայտնում ենք Ձեզ այն մասին, որ «ԹՐԵՅԴ ԱՐԹ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա են պահանջվող (նախատեսված) փաստաթղթերը և կազմված են հրավերով սահմանված պահանջներին համապատասխան, բացառությամբ՝*

Առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում (Հավելված 1.1) առկա են հետևյալ անհամապատասխանությունները.

- *Առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրում ավելացնել «Ապրանքները թուրքական արտադրության չեն» նախադասությունը,*
- *Թիվ 28 չափաբաժնով առաջարկված ապրանքի ֆիրմային անվանումը, ապրանքային նշանը, մոդելը և արտադրողի անվանումը չի համապատասխանում ապրանքի համար ներկայացրած տեխնիկական բնութագրին,*
- *Թիվ 28 չափաբաժնով առաջարկված ապրանքի «Քաշը» պարամետրային ցուցանիշը հստակեցված չէ (տեխնիկական բնութագրից հանել «ոչ ավել» բառը):»:*

ix. 12.04.2021թ.-ին «Թրեյդ Արթ» ՍՊԸ-ն վերոնշյալ ծանուցմամբ արձանագրված անհամապատասխանությունների շտկում ներկայացրել է թիվ 1.1 հավելվածի շտկված տարբերակը և որպես ապրանքի տեխնիկական բնութագիր նշել է հետրյալը՝ *«Փոշեկուլ*

ձեռքի, մարտկոցային: Չոր մաքրում: Հզորությունը՝ 100Վտ: Ներքաշման հզորությունը մարտկոցով՝ 14.8 Վտ: Սնուցումը՝ 220վ: Փոշեհավաքիչ փարայի ծավալը՝ 0,7լ: Մարտկոցները Li-ion տիպի: Աշխատանքը մարտկոցով 20ր: Վրադիր մասեր՝ անկյունային հատվածների համար նախատեսված մաս, խոզանակ, մեծ խոզանակ, երկար խողովակ, սնուցման մալուխ, լիցքավորող սարք: Քաշը՝ 1,1 կգ: Երաշխիքը՝ 2 տարի: Ապրանքը Թուրքական չէ:»:

x. Հանձնաժողովի 13.04.2021թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության 1.2-րդ կետի համաձայն՝ «Թրեյդ Արթ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում ներկայացրել է առկա անհամապատասխանությունների շտկման վերաբերյալ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիր, սակայն շտկված փաստաթղթով առաջարկված ապրանքի տեխնիկական բնութագրերը չեն համապատասխանում հրավերով սահմանված ապրանքի տեխնիկական բնութագրերին (պատասխանատու ստորաբաժանման գնահատման եզրակացությունը առկա է):

xi. Նույն արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 42-րդ կետով, որոշել է Մասնակցի հայտը գնահատել անբավարար և մերժել:

xii. «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կողմից տնտեսական, գրենական, գրասենյակային, կենցաղային ապրանքների և անխափան սնուցման սարքի մարտկոցի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԳՀԱՊՁԲ-2021/3-3-ԵՊԲՀ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի պատասխանատու ստորաբաժանման կողմից 13.04.2021թ.-ին տրված եզրակացության համաձայն գնման ընթացակարգի 28-րդ չափաբաժնով նախատեսված ապրանքի տեխնիկական բնութագրի և Մասնակցի կողմից որպես շտկում ներկայացված ապրանքի տեխնիկական բնութագրի միջև առկա են հետևյալ անհամապատասխանությունները, մասնավորապես՝

Հրավերով նախատեսված ապրանքի տեխնիկական բնութագիր	«ԹՐԵՅԴ ԱՐԹ» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած ապրանքի տեխնիկական բնութագիրը (շտկված)
Հզորությունը՝ առնվազն 120Վտ:	Հզորությունը՝ 100Վտ:
Նարքաշման հզորությունը՝ առնվազն 22Վտ:	Ներքաշման հզորությունը մարտկոցով՝ 14.8Վտ:
Սնուցումը՝ 12վ:	Սնուցումը՝ 220վ:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 21.04.2021թ.-ի թիվ 26/26-1/6055-2021 գրությամբ «Թրեյդ Արթ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է:

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ (30.07.2020թ.-ի թիվ 1275 փոփոխություններով) հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է ապրանքների գնման դեպքում իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Նույն կետի 21-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի գնահատումն իրականացվում է դրանց ներկայացման վերջնաժամկետը լրանալու օրվանից հաշված տասն աշխատանքային օրվա ընթացքում: Եթե գնման ընթացակարգի չափաբաժինների քանակը գերազանցում է յոթանասունհինգ չափաբաժինը, ապա հայտերի գնահատումն իրականացվում է դրանց ներկայացման վերջնաժամկետը լրանալու օրվանից հաշված տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում:

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային

առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Նույն Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «ե» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Վերոգրյալ իրավակարգավորումների լույսի ներքո, Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով հայտ, որը ներառում է մասնակցի կողմից ներկայացված դիմում-հայտարարությունը, առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը, գնային առաջարկը, հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ): Ընդ որում, Կարգի 41-րդ կետը ուղղակիորեն սահմանում է արձանագրված անհամապատասխանությունը շտկելու անթույլատրելիություն հայտում ներառվող միայն գնային առաջարկի համար, այն էլ՝ որոշ բացառություններով: Սույն կետի իմաստից բխում է, որ մնացած բոլոր դեպքերում հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հայտերի գնահատումն իրականացվում է հրավերով սահմանված կարգով և հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանող հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են, ներառյալ եթե մասնակիցը մինչև հայտերի ներկայացման

վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն գնահատող հանձնաժողովին չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում նշել, որ օրենսդիրն իմպերատիվ կերպով սահմանել է, որ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի երբ բացակայում է գնային առաջարկը կամ եթե վերջինս ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կողմից կողմից տնտեսական, գրենական, գրասենյակային, կենցաղային ապրանքների և անխափան սնուցման սարքի մարտկոցի ձեռքբերման նպատակով 25.03.2021թ.-ին հայտարարված «ԳՀԱՊՁԲ-2021/3-3-ԵՊԲՀ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի թիվ 1 հավելվածով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ 28-րդ չափաբաժնով նախատեսված փոշեկուլ ապրանքի համար սահմանվել է հետևյալ տեխնիկական բնութագիրը՝ *«Փոշեկուլ ձեռքի, մարտկոցային: Չոր մաքրում: Հզորությունը՝ առնվազն 120Վտ: Ներքաշման հզորությունը՝ առնվազն 22Վտ: Սնուցումը՝ 12վ: Փոշեհավաքիչ տարայի ծավալը՝ ոչ պակաս քան 0,5լ: Մարտկոցները NiMh տիպի: Աշխատանքը մարտկոցով առնվազն 10ր: Վրադիր մասեր՝ անկյունային հատվածների համար նախատեսված մաս, խոզանակ, մեծ խոզանակ, երկար խողովակ, սնուցման մալուխ, լիցքավորող սարք: Քաշը՝ ոչ ավել քան 1,5 կգ: Երաշխիքը՝ առնվազն 2 տարի:»:* Հանձնաժողովի 09.04.2021թ.-ին կայացված նիստի թիվ 2 արձանագրության 3.13-րդ կետով արձանագրվել է, որ «Թրեյդ Արթ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա են պահանջվող (նախատեսված) փաստաթղթերը և կազմված են հրավերով սահմանված պահանջներին համապատասխան, բացառությամբ՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում (Հավելված 1.1) առկա են մի շարք անհամապատասխանություններ, որոնց մանրամասն նկարագրությունը ներառված է շտկման մասին ծանուցման տեքստում, ինչով պայմանավորված Հանձնաժողովը որոշել է մեկ /1/ աշխատանքային օրով կասեցնել հայտերի գնահատման նիստը և ծանուցել «Թրեյդ Արթ» ՍՊԸ-ին առաջարկելով մինչև կասեցման ժամկետի

ավարտը շտկել արձանագրված անհամապատասխանությունները, ինչ մասին Հանձնաժողովի քարտուղարի կողմից 09.04.2021թ.-ին ծանուցում է ուղարկվել Մասնակցի tradearttender@gmail.com էլ. փոստի հասցեին, որով Պատվիրատուն հայտնել է հետևյալը՝ *«Հայտնում ենք Ձեզ այն մասին, որ «ԹՐԵՅԴ ԱՐԹ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա են պահանջվող (նախատեսված) փաստաթղթերը և կազմված են հրավերով սահմանված պահանջներին համապատասխան, բացառությամբ՝*

Առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում (Հավելված 1.1) առկա են հետևյալ անհամապատասխանությունները.

- Առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրում ավելացնել «Ապրանքները թուրքական արտադրության չեն» նախադասությունը,

- Թիվ 28 չափաբաժնով առաջարկված ապրանքի ֆիրմային անվանումը, ապրանքային նշանը, մոդելը և արտադրողի անվանումը չի համապատասխանում ապրանքի համար ներկայացրած տեխնիկական բնութագրին,

- Թիվ 28 չափաբաժնով առաջարկված ապրանքի «Քաշը» պարամետրային ցուցանիշը հստակեցված չէ (տեխնիկական բնութագրից հանել «ոչ ավել» բառը):»:

12.04.2021թ.-ին «Թրեյդ Արթ» ՍՊԸ-ն վերոնշյալ ծանուցմամբ արձանագրված անհամապատասխանությունների շտկում ներկայացրել է թիվ 1.1 հավելվածի շտկված տարբերակը և որպես ապրանքի տեխնիկական բնութագիր նշել է հետրյալը՝ *«Փոշեկուլ ձեռքի, մարտկոցային: Չոր մաքրում: Հզորությունը՝ 100Վտ: Ներքաշման հզորությունը մարտկոցով՝ 14.8 Վտ: Սնուցումը՝ 220վ: Փոշեհավաքիչ տարայի ծավալը՝ 0,7լ: Մարտկոցները Li-ion տիպի: Աշխատանքը մարտկոցով 20ր: Վրադիր մասեր՝ անկյունային հատվածների համար նախատեսված մաս, խոզանակ, մեծ խոզանակ, երկար խողովակ, սնուցման մալուխ, լիցքավորող սարք: Քաշը՝ 1,1 կգ: Երաշխիքը՝ 2 տարի: Ապրանքը Թուրքական չէ:»*:

Հանձնաժողովի 13.04.2021թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության 1.2-րդ կետով արձանագրվել է, որ «Թրեյդ Արթ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում ներկայացրել է առկա անհամապատասխանությունների շտկման վերաբերյալ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիր, սակայն շտկված փաստաթղթով առաջարկված ապրանքի տեխնիկական բնութագրերը չեն համապատասխանում հրավերով սահմանված ապրանքի տեխնիկական բնութագրերին (պատասխանատու ստորաբաժանման գնահատման եզրակացությունը առկա է), ինչով պայմանավորված Հանձնաժողովը որոշել է Մասնակցի հայտը գնահատել անբավարար և մերժել:

«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կողմից տնտեսական, գրենական, գրասենյակային, կենցաղային ապրանքների և անխափան սնուցման սարքի մարտկոցի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԳՀԱՊՁԲ-2021/3-3-ԵՊԲՀ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի պատասխանատու ստորաբաժանման կողմից 13.04.2021թ.-ին տրված եզրակացության համաձայն՝ գնման ընթացակարգի 28-րդ չափաբաժնով նախատեսված ապրանքի տեխնիկական բնութագրի և Մասնակցի կողմից որպես շտկում ներկայացված ապրանքի տեխնիկական բնութագրի միջև առկա են հետևյալ անհամապատասխանությունները, մասնավորապես՝

Հրավերով նախատեսված ապրանքի տեխնիկական բնութագիր	«ԹՐԵՅԴ ԱՐԹ» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած ապրանքի տեխնիկական բնութագիրը (շտկված)
Հզորությունը՝ առնվազն 120Վտ:	Հզորությունը՝ 100Վտ:
Նարքաշման հզորությունը՝ առնվազն 22Վտ:	Ներքաշման հզորությունը մարտկոցով՝ 14.8Վտ:
Սնուցումը՝ 12վ:	Սնուցումը՝ 220վ:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Նշված իրավանորմերի վերլուծությունից պետք է փաստել, որ օրենսդիրը մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար նախատեսել է սպառիչ պայմաններ, որոնք են պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունների խախտումը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելուց հրաժարվելը և հայտերը բացելուց հետո գնման գործընթացին հետագա մասնակցությունից հրաժարվելը: Միայն սույն դեպքերում է հնարավոր մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Բողոքներ քննող անձը փաստում է նաև, որ մասնակիցը պարտավոր է ներկայացնել հրավերով սահմանված պահանջներին համապատասխանող փաստաթղթեր (այսուհետ՝ Փաստաթղթեր): Եվ եթե Փաստաթղթերում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, իսկ մասնակիցը սահմանված ժամկետում չի շտկում արձանագրված անհամապատասխանությունները, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում: Նման դեպքում առաջանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի դրույթների կիրառման անխուսափելիությունը, քանի

որ Մասնակիցն իր գործողություններով կամ անգործությամբ, խախտելով գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, հանգեցնում է պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ «Թրեյդ Արթ» ՍՊԸ-ն մասնակցության հայտի թիվ 1 հավելվածով՝ գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ԳՀԱՊՁԲ-2021/3-3-ԵՊԲՀ» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և հրավերի պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտ:

Վերոնշյալներով պայմանավորված՝ առաջանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի դրույթների կիրառման անխուսափելիությունը, քանի որ Մասնակիցն իր գործողություններով կամ անգործությամբ, խախտելով գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, հանգեցրել է Պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպիսի պայմաններում Մասնակիցը պետք է ընդգրկվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Թրեյդ Արթ» ՍՊԸ-ն Պատվիրատուի կողմից սահմանված ժամանակահատվածում, չշտկելով արձանագրված անհամապատասխանությունները, խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որն էլ հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 21.04.2021թ.-ի թիվ 26/26-1/6055-2021 գրությամբ «Թրեյդ Արթ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք

չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2021/106 ծածկագրով ընթացակարգը բավարարել:

2. «Թրեյդ Արթ»ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**